

703

10K

ԱՐԽՑ. ՓԵՏԱԳՐԱԳԻՒՄԻ ԲԱՐՇԵՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոչիտացնմ'ր ամեն երկրներն միացե'ր.

Ի. ՇՅԵՐՆ

355/94

P-27

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Մ Ա Տ Ե Ր Ի Ա Լ Ի Ջ Մ

Թարգմ. Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ.

1mm
Ծ-91

ՄՈՍԿԻԱ—1920

[Handwritten signature]

ՀԵՅԴԿԱԼ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿԱՆՈՒՄԻ ԶԵՆՈՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ

1 մս

Ե-91


Ի. ՇՅԵՐՆ

Պրոկուրորի քաղաքականության միջոցով

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

Թարգմ. Ա. ՄԱԹԵՈՍԵԱՆ



9885

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿԱՆՈՒՄԻ
ԿԱԶՄԱՆԻՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ՄԱՍԿՈՎԱ—1920

2010



4818
39
12001
20292-60

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ.

Պատմական մատերիալիզմը կազմում է մարքսիստական աշխարհայեացքի գիտական հիմքը։ Նա սովորեցնում է, որ գոյութեան նյութական միջոցները, կամ կենսական միջոցները, խաղում են գլխավոր դերը պատմութեան մէջ, որ արտադրութիւնը և այդ միջոցների հաւաքումը հանդիսանում են գործունէութեան գլխավոր խթան՝ ինչպէս առանձին մարդու, այնպէս էլ ամբողջ մարդկութեան, և ուրիշն, ամբողջ պատմական շարժումիւ։

Գոյութեան նյութական միջոցները պատճառահետեւորէն ամփոփւած են արտադրութեան մէջ (մէջ առնելով փոխանակութեան սիստեմը), այսինքն մարդկութեան գործունէութեան մէջ, որ ստեղծում էր ամբողջութեամբ է կենսական միջոցներ։

Արտադրութիւնը դանադորն դարեւորանում տարբեր է լինում, ինչպէս պրոցեսի բնութիւնը, այնպէս էլ հետեւանքների յատկութեամբ։

Ձեերի այդ տեսակի փոփոխումն արտադրութեան մէջ հանդիսանում է որպէս պրոգրէս, որպէս պրոգրէսիւ — առաջընթաց դարդացում։ Արտադրութիւնը շարունակ յառաջողիմում է, առաջ է

րնթանում, զբա հետ մարդիկ աւելի ու աւելի ծանօթանում են բնութեան ու նրա ոյժերի հետ և ենթարկում նրանց իրենց մարդկային նպատակներին ու կարիքներին: Նոքա աւելի ու աւելի սովորում են օգտուել բնութեան ոյժերից ու բնական արդիւնքներից, արտադրութեան նպատակների ու կենսական միջոցների ու սպառումի միւս առարկաների հալթալթման համար, որոնք բարձրացնում են կեանքի կոմֆորտը. նոքա աւելի ու աւելի հետաքրքրւում ու կատարելագործում են իրենց գործիքները կամ արտադրութեան միջոցները (բանաւորական գործիքները), ձօնապէս և արտադրութեան մեթոդները: Սկզբում մարդս այնքան աղքատ էր, որքան և անասունը. նա անոյժ և անօչնական էր բնութեան տարներային ոյժերի առաջ, նա անժանօթ էր և իր սեփական ոյժերի հետ ու այդ պատճառով իր կենցաղավարութեան մէջ ստիպւած էր բաւականատու այն սակաւաթիւ «պարզեւեղներով», որոնց ինքը բնութիւնը զիջում էր նրան: Բայց չեա՞յ մարդս սկսում է աստիճանաբար աւելացնել իր գոյութեան միջոցների քանակութիւնը ու կենցաղավարութեան կոմֆորտի առարկաները, և այդպիսով աղքատ-մութացող մարդկութիւնը դառնում է հարուստ-արքայ Կրեոսոս:

Նւ որովհետեւ գոյութեան նիւթական միջոցներն անշուշտ անհրաժեշտ են մարդու համար.

օրպէս նրա գոյութեան զլիաւոր պայմանն ու կազմում են նրա կենսականութեան և ոյժի արտալայտութիւնների հիմքը, զբա համար էլ այստեղից կարելի է եղրակացնել, որ ամբողջ քաղաքակրթութիւնը օրոշւում է արտադրութիւնով, որ պատճաթեան մէջ զանազան տեսակի փոփոխութիւններն ու տարբերումները պայմանաւորւում են արտադրութեան փոփոխումով: Զարգացման օրէնքը, որ արտայայտւում է պատմութեան մէջ մարդու տնրեղիտտ պրոգրեսիւ կատարելագործման ձևի մէջ, հարկաւոր է հասկանալ իբրեւ արտադրութեան զարգացում, որ զարկ է տալիս յառաջադիմող քաղաքային իշխման բոլոր միւս կողմերին: Սրտադրութեան աւելալ ձևը ամեն մի աւելալ պատմական շրջանում իր կնիքն է դնում համապատասխան դաբըշրջանի բոլոր կուլտուրական երևոյթների վրայ, կուլտուրայի բոլոր միւս ճիւղերի վրայ և նոյնիսկ ինտելիկտաւալ կուլտուրայի վրայ: Վերջապէս պատմութեան մէջ կուլի բոլոր տեսակները վերջին հաշւով հանդիսանում են իբրեւ պայքար նիւթական շահերի ու բարիքների համար:

Զարգացման վերաջական օրէնքը, որը հաստատւած էր պատմութեան համար Հեղեկի փիլիսոփայութեամբ, Մարքս-Էնգելսի պատմական մատերիալիզմի վարդապետութիւնը արտայայտւում է հետեւեալ ֆորմուլայով. — պատմական զարգացումը

է արտադրութեան զարգացում, որով պայմանաւորուած է որոշուած են զարգացման բոլոր միւս տեսակները կամ փոփոխութիւնները:

«Նիւթական կեանքի արտադրութեան՝ ձեռով ընդհանրապէս որոշուած է կեանքի սոցիալական, քաղաքական և մտաւորական ամբողջ պրոցեսը» (Կ. Մարքս): Ուստի յայտնի հին դարձածքը—«Ժամանակները փոխուած են, դոցա հետ էլ փոխուած ենք և մենք»—ճիշտ կլինէր ձեւակերպել այսպէս. «Փոխուած է արտադրութիւնը, դրա հետ էլ փոխուած ենք և մենք»:

Այդպիսով, հասարակ, տարրական հիմունքից, որ գոյութեան նիւթական միջոցները մեծ դեր են խաղում պատմութեան ու մարդու կեանքի մէջ, առաջանում են պատմութեան հետեւեալ հիմնական սկզբունքները.

1. Ամբողջ կուլտուրական զարգացումը պայմանաւորուած է արտադրութեան զարգացումով:

2 Ամեն մի տւեալ կուլտուրական դարեշրջանի բովանդակութիւնը որոշուած է արտադրութեան համապատասխան ձեռով, ինչպէս նիւթական, այնպէս էլ հագեւոր շրջանում:

3. Կուլի պատմական տեսակները, որ մղում էր մարդկութիւնը, հանդիսանում են, առաւելապէս, իբրեւ պայքար նիւթական շահերի ու բարիքների համար: Պատմական մատերիալիզմը կամ պատ-

մութեան մատերիալիստական» ըմբռնումը անշուշտ լեզափոխական պատմական տեսութիւն է. պատմութեան ըմբռնման հին իդէալիստական ձևերի վերաբերմամբ պատմական մատերիալիզմը նոյնպիսի հակադրութեան մէջ է գտնուած, ինչպիսի հակադրութեան մէջ գտնուած էր, օրինակ, Կոպերնիկի ուսմունքը ևրկրի՝ արեւի շուրջը պտտւելու մասին հին դատական հասկացողութեան վերաբերմամբ:

Պատմութեան իդէալիստական ըմբռնման կողմնակիցները հաստատում են, որ զաղափարները (իդէաները), այսինքն, մարդու մտքերն ու հայեացքները ամենագլխաւոր դերն են խաղում կեանքի ու պատմութեան մէջ և որ կուլտուրական զարգացման վերջնական պատճառը կայանում է հագեւոր, մտաւոր զարգացման մէջ: Օրինակ, մարդակերութեան վերացումը իդէալիստը բացառում է մտաւոր զարգացումով կամ կրթութեան տարածումով, երբ մարդիկ սկսում են զիտակցել, որ մարդակերութիւնը ստորացնում է մարդուն: Ընդհակառակը, պատմաբան-մատերիալիստը կպնդէ, որ մարդակերութիւնը վերացւեց ևկամուտի յաւելացումի կամ արտադրութեան արդիւնաւորութեան շնորհիւ, որի պատճառով և մարդս էլ կարիք չէր զգում ուսել ուրիշներին իր քաղցը չափեցնելու համար:

«Ոչ թէ մարդկանց դիտաւորութեամբ է որոշուած նոցա կացութիւնը, ընդհակառակը, նոցա հա-

սարակական կաղուծեալն է որոշում գիտակցութիւնը» (Կ. Մարտ)։

«Քոյը հասարակական փոփոխութիւնների ու քաղաքական լեղաշրջումների վերջնական պատճառը հարկաւոր է որոնել ոչ թէ նոցա գիտակցութեան ածման մէջ, այլ արտադրութեան և փոխանակութեան ձեւերի փոփոխութիւնների մէջ» (Յ. Էնգէլս)։

Պատմական մատերիալիցմը համեմատում էին Դարվինի էվոլյուցիայի տեսութեան հետ, բայց պատմութեան ու սոցիալոգիայի համար այն ներկայացնում է աւելի խոշոր գիտական նշանակութիւն, քան Դարվինիգմը։ Նա բաց արաւ ու բացառիկ մեկ պատմութեան խոր ծածկւած շարժառիթները ու աւելց մեկ բոլոր կուլտուրական վաստակների զարգացման առանձին շրջանների բնութագրի—կոպիտ մատերիալիստականից մինչև ամենասուրբ իդէալական ձևերը—սոցիալական ու քաղաքական հիմնարկութիւններից ու պայքարի տեսակներից մինչև վերացական դիտութիւնը, գեղարուեստը, բարոյականութիւնը և կրօնը։

Պատմական մատերիալիզմի լայն առիկ կուլտուրական պատմութեան զանազան շրջանները հանդիսանում են իրրեւ արգասիք պատմութեան օրինականութեան, ի հակադրութիւն առաջադանմեկ հասկացողութիւններին, որոնցով պատմու-

թիւնը հաշոււմ էր կամ իրրեւ արգասիք առանձին «հերոսների» դորժունէութեան, կամ իրրեւ հետեանք հասարակ պատահականութեան։ Ու այդ տեսակ անմեկ հայեացքների կողմնակից էին ի հնումն մինչև անդամ Վոլտերի կամ Պասկալի նման խելօք մարդիկ, որին վերադրում են հետեալ ծիծաղելի դարձածքը. «Եթէ կրօնաւորայի քիթը մի քիչ կտրե կամ մի քիչ երկար լինէր, հաւանական է, որ ամբողջ աշխարհը այժմ ուրիշ կերպարանք ունենար»։ Բայց պատմական մատերիալիզմը ունի նաև շատ մեծ պրակտիկ նշանակութիւն. նա տալիս է ճիշտ լուսարանութիւն և ներկայ ժամանակին, նրա տար ու դարձին ու պայքարին, իսկ բանւոր դասակարգին նա չափապէս մատուցանւած է մեծ ծառայութիւն, իրրեւ փտահելի կողմնացոյց այն ճանապարհի վրայ, որով բանւոր դասակարգը գնում է իրազօրծելու իր համաշխարհային պատմական միսսիան—ազատագրելու ամբողջ հասարակութիւնը։ Իրտելով ներկան որպէս պատմութեան անցեալի արգասիք, նրա ներքին օրինականութիւնը ու ներկայումս ապագայի սաղմն ու շարժառիթները նախատեսելով, դժոյշ կերպով կշռելով իր սլծերն ու պարզ գիտակցելով իր կոչումն ու ոյժը, պայքարելով դիտական սոցիալիզմի դրօշակի տակ ազատագրութեան համար, կազմակերպւած բանւորական պրոլետարիաւոր ուղղում է

ժողովուրդն անապատներ դեպի գեղեցիկ փայլուն ապագան նայն վստահութեամբ, ինչպէս մի ժամանակ Կոլումբը ձգտում էր դէպի նոր, բոլորքի համար անծածօթ աշխարհը: Ու այդ հանապարհով տանում է նրան կոլլեկտիվիստական կուսակցութիւնը, որը ընթանում է դէպի նշանակւած նպատակը վճռական ու հաստատուն քայլով, չափողութեամբ անցնելով և պետական սօցիալիզմի Սցիլլոսը և անհիմն անարխիզմի Խարիբդը:

Պատմական մատերիալիզմի հիման վրայ ստեղծւեց դասակարգի հասկացողութիւնը, որը Մարքս և Էնգելսը մտքին պատմութեան և տնտեսագիտութեան մէջ, և այդ հասկացողութեան շնորհիւ հնարաւոր դարձաւ չափողութեամբ պարզել պատմական անցքերի լարերին թուր, արդի կեանքի լուզումնալից շրապտոյար և կուսակցութիւնների պայքարը:

«Արտագրութեան պրոցեսի մէջ մարդիկ դործ են օւնենում ոչ միայն բնութեան հետ, նոքա այդպէս թէ այնպէս աշխատակցում են իրար ու փոխադարձաբար փոխում են իրար հետ իրենց աշխատանքի արդիւնքը: Արտագրութեան նպատակների համար նոքա մտնում են իրար հետ որոշ յարաբերութիւնների ու յարակցութիւնների մէջ և յատկապէս այդ հասարակական յարաբերութիւնների ու յարակցութիւնների սահմանների մէջ, նոքա

մտնում են փոխանակութեան մէջ բնութեան հետ և իրականացնում են արտագրութեան խնդիրները:

«Արտագրութեան գործիքների ու միջոցների բնոյթի փոփոխումով, փոխւում են և այն հասարակական յարաբերութիւնները, որոնց մէջ մտնում են առանձին արտագրողներ, փոխւում են և այն պայմանները, որոնց մէջ նոքա փոխում են իրար հետ աշխատանքի արդիւնքները և մասնակցում արտագրութեան ընդհանուր պրոցեսի մէջ: Պատերազմի նոր գործիք հնարելու հետ, հրաձգութեան նոր զէնքի հետ—տնհրաժեշտօրէն փոխւեց և զօրքի ամբողջ ներքին կազմակերպութիւնը, փոխւեցին նաև այն յարաբերութիւնները, որոնց մէջ անհատները կազմում են զօրք և դործում են ինչպէս զօրք, փոխւեց, վերջապէս, նոյնիսկ բանակների փոխադարձ յարաբերութիւնները: Այդ պատճառով հասարակական յարաբերութիւնները, որոնց մէջ արտագրութեամբ պարապում են անհատները, կամ արտագրութեան հասարակական յարաբերութիւնները, փոփոխւում են արտագրութեան գործիքների և միջոցների կամ արտագրական ուժերի փոփոխումով: Արտագրութեան յարաբերութիւնները ընդհանուր հետեանքով կազմում են այն, ինչ կոչւում է—հասարակական յարաբերութիւններ կամ հոսարակութիւն, որը առաջանում է համապատասխան պատմական

զարգացման աւելի շրջանի, հասարակութիւն՝
աւելի սպեցիֆիկ, ուրոյն բնութիւն. (Կ. Մ. արք.):

Մասնաւոր—անտեսական պետութիւնը, կամ
մասնաւոր տնտեսութիւնների պետութիւնը, ցիվի-
լիզացիայի շրջանում հասարակութեան այն ձևն է,
որի մէջ առանձին բնութանը ներկայաց-
նում են իրենցից առանձնացած ատոմներ, չափա-
զանց թալլ ու գուտ մեքենայաբար միացած տե-
րիւթորիակ կապով և բնդհանուր—պետական իշխա-
նութիւնով, հակադիր բնական կերպով ոտնդժւած,
բարբառոսական դարեշրջանի ինքնուրոյն կոմմունիս-
տական ցեղական համայնքների:

Այդ տեսակ մասնաւոր անտեսական պետու-
թեան սարուկաւորան բնորոշւում է զանազան դա-
սակարգների գոյութեամբ, եթէ դասակարգը տնտե-
սական կատեգորիայի իմաստով, հասկանանք մի
խումբ մարդկանց, որոնք միացած են անտեսական
շահերի համերաշխութեամբ: Ունեւոր մարդիկ (սե-
փականատէրերը) և չունեւորները (աղքատները),
միշտ կաղմել են երկու զլխաւոր դասակարգ, որոնք
իրենց հերթին բաժանւում են զանազան տեսակ
խմբակների ու ենթախմբակների՝ զանազան տեսակ
շահերով: Ուրեմն, ցիվիլիզացիայի շրջանի պետու-
թիւնը դասակարգային պետութիւն է:

Առանձին դասակարգների ու դասակարգների
խմբերի միջև գոյութիւն ունի կատաղի պայքար

նիւթական բաբիքների համար, քաղաքական գեղե-
մոնիայի համար, որի վերջնական նպատակը որոշ-
ւում է տնտեսական շահերով—«Ամեն մի հաստ-
քակութեան (պետութեան) պատմութիւնը դասա-
կարգների պայքարի պատմութիւն է» (Կոմ. Ման.)
ու դասակարգների այդ ահռելի պայքարի առաջ
հանգչում ու չքանում են իրենց նշանակութեամբ
բոլոր միջազգային պատերազմները: Տնտեսապէս
զօրեղ դասակարգը, այսինքն, սեփականատէրերի
գոտակարգը, շահագործում է աղքատ դասակար-
գին, արաւորութեան և իրենց հարստութեան
աւելացման նպատակով: Արդիւնքների փոխանա-
կութեան պրոպեոսի մէջ հաւասար կներպով շահա-
գործում են իրար և սեփականատէրերի առանձին
դասակարգերը. ու այն դասակարգերը, որոնք
իրենց տրամադրութեան տակ ունին աւելի մոմեն-
տի համար արաւորութեան աւելի կարեւոր միջոց-
ները, առաւելապէս շահագործում են միւս դասա-
կարգերին:

Պետութեան մէջ ունեւոր դասակարգը, այսին-
քըն այն դասակարգը, որ իր տրամադրութեան
տակ ունի արաւորութեան պլիաւոր գործիքները,
կամ հարուստ դասակարգը, առհասարակ ախրա-
պետում է քաղաքականօրէն, այսինքն, օգտւում է
արաւորութիւնով ու գերակշռում է օրէնսդրական
ու կառավարչական գործերի մէջ, հաւաքելով իր

ձեռքը օրէնսդրական ու կառարողական իշխանութիւնը:

Սակայն դասակարգային յարաբերութիւնները մշտական, անփոփոխ չեն: Արտադրութեան ձեռքով կարգի փոխելու հետ փոխուած են և դասակարգերը և դասակարգերի յարաբերութիւնները: — Ձեռքի չրադացը ստեղծեց հին, դասական հասարակութիւն, ապա մարդկանց ու օարուկների — դասակարգի բաժանումով: Չրի չրադացը ստեղծեց միջնադարեան հասարակութիւն, Ֆէֆալ տէրերի ու ճորտ մարդկանց դասակարգի բաժանումով: վերջապէս, շրջադարացը ստեղծեց արդի հասարակութիւնը, բաժանուած արդիւնաբերող — կապիտալիստների ու վարձու բանւորի դասակարգերի — ալդպէս է մօտաւորապէս ասում Մարքսի դասական Ֆորմուլաներից մէկը: Արտադրութեան պրոդրեսի հետ, այսինքն, նոր արտադրող ոլթերի ու արտադրութեան նոր մեթոդների յայտնագործման ու շահագործման հետ, աշխատանքի նոր գործիքներ հնարելու հետ միաժամանակ փոխուած է աշխատանքի տեխնիկական ու հասարակական բաժանումը, փոխուած են դասակարգերը ու նոցա փոխադարձ յարաբերութիւնները արտադրութեան, փոխանակութեան և արդիւնքների բաժանման մէջ: Արտադրութիւնը, որ գործադրում էր ստրուկների աշխատանքը, արտադրութեան հին ձեւն էր. ար-

տադրութիւնը, որ գործադրում էր ճորտերի աշխատանքը ու համքարական արհեստը, արտադրութեան միջնադարեան ձեւն էր. վերջապէս, արտադրութիւնը, որ լինում է վարձու աշխատաւորների աշխատանքի վրայ, արտադրութեան արդի կապիտալիստական ձեւն է¹⁾:

Արտադրական տեխնիկայի նոր շրջանի մերձենալու հետ միաժամանակ փոփոխութիւն է առաջ գալիս, ինչպէս արտադրութեան հասարակական ձեւի մէջ, այնպէս էլ հասարակական յարաբերութիւնների մէջ, որոնք յարմարուած են արտադրութեան տւեալ ձեւին: Ուրեմն, արտադրական տեխնիկայի փոխելու հետ, փոխուած է և արտադրութեան ձեւը ու դրա հետ փոխուած է ամբողջ հասարակական կամ սոցիալական կարգը:

Արտադրութեան իւրաքանչիւր նոր ձեւը սկզբում օգտաւէտ է լինում ոչ միայն շահագործող կամ տիրապետող դասակարգի համար, այլ նաև շահագործւող, հպատակւող դասակարգի համար: («Բայց լետով, — ասում է Մարքսը, — զարգացման որոշ աս-

¹⁾ Հարկաւոր է նկատել, որ արտադրութեան ձեւը, այնպիսի արտայայտութիւն, ինչպէս օրինակ, արտադրութեան կապիտալիստական ձեւը, նշանակում է ոչ միայն արտադրութեան տեխնիկան, այլ նաև արտադրութեան սոցիալական յարաբերութիւնը, այսինքն ցոյց է տալիս այն ձեւը, որի շնորհիւ սոցիալական տեղերի դասակարգը տւեալ դրոշմաւորում աղքատ դասակարգի մասնակցութեամբ վարում է արտադրութիւնը: Մարքսը ասում է («Zur kritik d. Pol. ökon» աշխատ. յտ.) «Կանարի միջոցների հասարակական արտադրութեան մէջ մարդիկ մտնում են որոշ, անհրաժեշտ, որին

տիմանի վրայ հասարակութեան նիւթական արտա-
դրական ոլորտը հանդիպում են ընդհարման գոյու-
թիւն ունեցող արտադրական շարաքերութիւն-
ների հետ, կամ իրաւաբանների լեզուով արտա-
յայտելով, սեփականութեան շարաքերութիւնների
հետ, որոնց սահմանների մէջ նորա մինչեւ այն ժա-
մանակ զօրծում էին: Արտադրական ոլորտի զար-
գացման ձևերից այդ շարաքերութիւնները դառ-
նում են կապալներ: Այդ ժամանակից է, որ սկըս-
ւում է օոցիալական լեզուափոխութիւնների շրջանը,
ու տնտեսական հիմքի փոփոխութեան հետ վաղ
թէ ուշ փոխում է և ամբողջ հսկայական վերնա-
շէնքը»... Այդ ժամանակ «բանակներ դառնում է
անհեթեթութիւն, իսկ բարիքը — չարիք»: Արտա-
դրութեան նոր ձևը, որը մի ժամանակ հասարա-
կանօրէն օգտաւէտ էր, սկսում է դործել ի վնաս
հասարակութեան, շատացնելով և շահագործողնե-
րի ազդատութիւնը և չքաւորների բանակութիւ-
նը, այն ժամանակ, երբ արտադրութեան նոր տեխ-
նիկան, աւելացնելով արտադրութեան արդիւնա-

կամքից կախում չունեցող շարաքերութիւնների մէջ, արտադրական
շարաքերութիւնների, որոնք համապատասխանում են նրանց նիւ-
թական արտադրական ոլորտի զարգացման որոշ պատիճաններ: Այդ
արտադրական շարաքերութիւնների ամբողջութիւնը կազմում է
հասարակական-տնտեսական ստրուկտուրան: Համ. նախ. Մարքսի
ցիտ., որը առաջ է քննադատել միայն վերնուստ (արտադրութեան
ստրուկտուրայի մէջ մարդիկ գործ են ունենում ոչ միայն քննութեան
հետ և այլն):

արտութիւնը կարող էր կարեւոր չափով բարելաւել
և շահագործող դասակարգի դրութիւնը:

Այդ վերջին հանգամանքը սակաւ չի նպաս-
տում այն բանին, որ բանւոր դասակարգը դառնում
է գոյութիւն ունեցող հասարակական շարաքերու-
թիւնների հակառակորդը, որոնց գոյութեան ժա-
մանակ նա զրկւած է հնարաւորութիւնից օղտել
արտադրութեան տեխնիկայի այն բարելաւութե-
նից, որոնք ուրիշ շարաքերութիւնների միջոցին
կարծրացնէին ընդհանուր բարօրութիւնը:

Յիրապետող դասակարգը, ձգտելով պահել իր
ձեռքում գերակշռող դրութիւնը, լայն օգտւում է
այն գործիքով, որ տալիս է նրա ձեռքը նրան
պատկանող իշխանութիւնը:

Կուլեկտիվիստական շարժումը դասակարգային
շարժում է - իր պատճառներով ու զարգացումով,
բայց իր վերջնական նպատակով — ընդհանուր կուլ-
տուրական:

Մեքենաների դործարաններում երեւալուն պէս
ու հազարակիցութեան միջոցների օժիւրայում, ար-
տադրութիւնը մտաւ նոր զարգացման, նոր շրջա-
նի մէջ: Մեքենան կերպարանափոխեց ամբողջ արտա-
դրութիւնը, հասցրեց նրան չեղած բարձրութեան,
ստեղծեց ազդի խոշոր ինդուստրիան ու համաշ-
խարհային փոխանակութիւնը ու զարգացրեց ար-
տադրութեան կապիտալիստական ձևը, այսինքն.



արտադրութեան, որը չենուում է վարձու բանւորի աշխատանքի վրայ: Սկզբում մեքենան ընդհանուրի համար օգտաւէտ էր նրանով, որ նա բացեց աշխատանքի նոր աղբիւրներ, աժանացրեց, շնորհիւ մասսայական արտադրութեան, կենսական միջոցները և օգտաւոր միւս առարկաները, նւազեցրեց աշխատանքի գծւարութիւնը ու, դարձնելով նորա ժարդկանց ազատ վարձու աշխատողներ, ընդարձակեց վերջինների անձնական աղատութիւնը (ստրուկների՝ ճորանք դառնալու համապատասխան պրոցեսով): Բայց չեաոյ նա սկսեց ցոյց տալ և շատ վատ կողմեր ի վնաս արտադրող մասսայի: Դառնալով կատաղի մրցակից բանւոր-մարդուն, նա սկսեց դուրս մղել հազարաւոր բանւորների, ստեղծեց քանակութեամբ անող պահեստի արդիւնաբերող զօրք ու շրանով վատթարացրեց ազատ բանւորների աշխատանքի պայմանները (ցածրացնելով բանւորների ֆիզիքական օյժի պահանջը ու բարձրացնելով վերջիններիս առաջարկութիւնը): Այնուհետև նա նպաստեց աշխատավարձի ցածրացմանը ու բանւորական օրւայ երկարացնելուն, աւելացրեց բանւորների կախումը աշխատանքատէրերից ու տւեց նրանց ձեռնարկողների անձնական աւսութեան քմահաճութիւն ու հարստահարութեան, որոնք չէին սահմանափակւած ոչ մի անտեսական կորրեկտիվով: Բիչ աղէտներ չպատճառեց մեքենան և

հասարակութեան միւս խաւերում: Նա նպաստեց միջակ դասակարգի ոչնչացմանը, չքաւորներ դարձնելով նոցա ներկայացուցիչներին, նա խիստ ուժեղացրեց մրցումի պայքարը ու օգնեց փոքր կապիտալիստների դուրս վաճառելուն մեծերի կողմից, իսկ վերջիններին—աւելի մեծ կապիտալիստների և կապիտալիստական միութիւնների կողմից: Այդպիսով, զարգացնելով կապիտալի կուտակումը, նա նեղացնում էր սեփականատէրերի շրջանը, որոնք սկսեցին դառնալ կապիտալի հեղիթթային հարուստ մագնատներ, սակայն չապահովւած ոչ տնտեսական ցնցումից ու սասանմունքից, ոչ կրիզիսից ու կործանումից: Այդպէս, նիւթական արտադրական ոյժերը ընդհարման են հանդիպում զոյութիւն ունեցող արտադրական յարաբերութիւնների հետ ու խոշոր մեքենային ինդուստրիան դառնում է աւելի ու աւելի անպարփակ արտադրութեան կապիտալիստական ձևի մէջ, որովհետև վերևում չիշլած բոլոր աղէտները առաջ են գալիս ոչ թէ արտադրական նոր տեխնիկայից, ինչպէս այդպիսից, այլ նրա կապիտալիստական դործադրութիւնից: Ինքն ըստ ինքեան խոշոր ինդուստրիան, շնորհիւ մեքենաների, կարող էր նւազեցնել կամ ամենեւին ոչ բնչացնել մասսայի կարիքը, ստեղծելով արժէքների ահագին լաւերւած, բայց նրա կապիտալիստական կիրառումը խիստ աւելացնում է մասսայի կարիք-

ներք ու հարստացնում է իր ատատ արդիւնքներով միայն կապիտալիստներին. Ինքն ըստ ինքեան նա կարող էր թեթեւացնել բռնութիւնների աշխատանքի ծանրութիւնը, բայց նրա կապիտալիստական կիրառումը թեթեւացնում է միայն կապիտալիստների դրութիւնը ու աւելացնում է այն դժարութիւնները, որոնց ենթարկւում են բանւորները: Ինքն ըստ ինքեան մեքենան ներկայացնում է բարիքների անսպաս աղբիւր, բայց կապիտալի մշտնական առկառնում է նոյալ միլիոնների համար Միւս կողմից, արտադրութեան կապիտալիստական ձեր ալժմ գառնում է արտադրութեան կապանքներ, խանդարելով նրա ազատ զարգացումը: Ինչպիսի խոշոր քանակութեամբ բարիքներ ու կուլաուրական բնութի ինչ արժէքներ կյաջողւէր արտադրել, եթէ մեր ժամանակաւ զարգացած աշխատադրական տեխնիկան ազատէր կապիտալիստական կապանքներից (լիշենք, թէկուզ, Պանամայի ջրանցքի մասին):

Արդի խոշոր ինդուստրիայի մէջ արտադրական տեխնիկան հասել է մինչ այն աստիճան, որի գոյութեան միջոցին նա հանդիպում ընդհարման ոչ միայն արտադրութեան կապիտալիստական ձեռի հետ, որը համապատասխանում է դասակարգերի յարաբերութիւնների ուրոյն աեծակին, այլ նաև հասարակութեան դասակարգային բաժանման

հետ, եւս կարե ասած, դասակարգային պետութեան հետ: Սկզբում այդ դասակարգային պետութիւնը նոյնպէս յառաջադիմութեան նշան էր:

«Մինչ մարդկային աշխատանքը քիչ էր արդիւնաւոր ու չէր տալիս շատ կենսական միջոցներ անհրաժեշտ քանակութիւնից աւել, արտադրողական ոյժերի զարգացումը, փոխանակութեան բնագործաւոր, պետութեան ու իրաւունքների զարգացումն, գիտութեան ու գեղարւեստի ստեղծումը հնարաւոր էին միայն աշխատանքի բաժանման բարձրացման պայմանով, որը հիմնւած էր աշխատանքի բաժանման վրայ մասսայի միջև, որ կատարում էր հասարակ ձեռային աշխատանք ու սեկաւաթիւ արտօնեալ դասակարգի միջև, որը ղեկավարելով արտադրութիւնը, առեւտուրը, գիտական գործերը, յետագայում պարապում էր նաև գեղարւեստով ու գիտութեամբ: Քանի որ, իսկապէս, աշխատաւոր բնակչութիւնը մինչ այն աստիճան կրանւում է պարտաւորեցուցիչ աշխատանքով, որ նա ժամանակ չի ունենում հասարակակաւ եռլիկալիքստական գործերը վարելու (արտադրութեան, պետական գործերի, դատաւորութեան, գեղարւեստի, գիտութեան ղեկավարութիւն և այլն), մինչև այդ ժամանակ անհրաժեշտ էր այդ տէսակ դասակարգ, որը

ազատ լինելով իսկական աշխատանքից, կարող էր պարագել այդ գործերով»: (Էնգելս)

Այդ բոլորին կարելի է աւելացնել նաև այն, որ դասակարգային պետութիւնը անհրաժեշտ անցողական շրջան էր փոքր ցեղական գրուպպաների (ցեղ) զարգացման մէջ մինչև միջազգային հասարակութեան աստիճանը: Ապրանքային փոխանակութիւնը դուրս է մղում մարդկանց առանձնացած ցեղական ինքնավար համայնքներից ու զարգացնում միջազգային մերձեցումը: Բայց մեր ժամանակ պետութիւնը, դասակարգային հասարակութիւնը, կորցրել է գոյութեան իմաստն ու իրաւունքը, նա, շնորհիւ արտադրութեան մեծ պրոգրեսի, դարձել է մի հիմնարկութիւն, ի վնաս հասարակութեան:

«Արտադրողական ոլժերի հեկայական զարգացումը, որը հետևանք է խոշոր ինդուստրիայի, թայլ է տալիս հիմա աշխատանքը բաժանել հասարակութեան բոլոր անդամների վրայ առանց բացառութեան ու գրանով պակասեցնել իւրաքանչիւրի բանւորական օրը մինչև այն աստիճան, որ բոլորն էլ ունենան բաւականի ազատ ժամանակ անձամբ մասնակցելու հասարակութեան, թէ տեօական ու թէ գործնական բնոյթ ունեցող կոլլեկտիվիստական բոլոր գործերի մէջ»:

«Ընդհանրապէս կարելի է մատնանշել աօիական դաստիկան, Ֆէոդալական ու արդի արտադ-

րութեան բուրժուական ձևերի վրայ, ինչպէս պրոգրեսիւ դարեշրջանների վրայ՝ հասարակութեան տնտեսական կառուցւածքի մէջ: Արտադրութեան բուրժուական շարաքերութիւնները արտադրութեան հասարակական պրոցեսի վերջին հակառակական ձևն է...:

«Բայց արտադրական ոլժերը, որոնք զարգանում են բուրժուական հասարակութեան ծոցում, ստեղծում են և նիւթական պայմաններ այդ հակասութիւնը լուծելու համար: Այդ հասարակական կառուցւածքով վերջանում է մարդկային հասարակութեան անցած, գնացած պատմութիւնը»: (Մարքս)

Ինքնուրոյն կերպով զարգացած հոմոնինիստական ցեղը (gens) հանգիստանում է բարբարոսական դարեշրջանի հասարակական կառուցւածքը, այնպէս, ինչպէս պետութիւնը կամ դասակարգային հասարակութիւնը դարձաւ ցիվիլիզացիայի դարեշրջանի հասարակական կառուցւածքը: Բայց ապագայի կոլտուրական դարեշրջանի հասարակական կազմութիւնը լինելու է սոցիալիստական հասարակութիւնը, արտադրութեան կենտրոնացած սիստեմով, որը տարածւելու է հասարակութեան բոլոր անդամների վրայ և որը առաջանալու է այն մասնական կենտրոնացումից, որը համապատասխանում է կապիտալիստական արտադրութեան ձևին:

Դասակարգային (կապիտալիստական) հասարակութեան ապադասակարգային հասարակութիւն դառնալու պրոցեսը կատարուած է անցած ժամանակների բոլոր հասարակական լեղաշրջումներին համանման: Աղքատութեան պրոզերեսի պրոցեսը և բանւորների կենտրոնացումը արդիւնաբերական հիմնարկութիւններում, նպաստում են բանւոր դասակարգի ինքնաճանաչութեան զարգացմանը ու ահաբեկ ինքնազործունէութեանը: Աշխատաւորները կազմակերպւում են արհեստաւորական հիմունքներով, որպէսզի հասնեն աշխատանքի լուազոյն պայմանների ու տան կողմակերպւած բանւորներին այնպիսի շահ ու առաւելութիւններ, որոնցից չի կարող օգտուել առանձին չհազմակերպւած բանւորը: Միւս կողմից բանւորները կազմակերպւում են ինքնուրոյն կոլլեկտիվիստական կուսակցութեան մէջ, որ ազդեան օրէնսդրութեան վրայ յօգուտ բանւորների ու վերջը տիրանաւ այն դորժերներին, որոնցով սեփականատերերը պաշտպանում են իրենց արտօնեալ դրութիւնը թշնամիների յարձակումից: Շահագործողների քանակական կարողութիւնը, վերջ ի վերջոյ, կ'յաղթի այժմ տիրապետող դասակարգին, որը աւելի և աւելի նւազում է քանակութեամբ: Բացի բանից կապիտալիստական արտադրութեան ձեւի ղգանազան թերութիւնները, որոնք արտադրում

են հէնց նոյն սեփականատերերի դասակարգի վրայ, ստիպում են այդ դասակարգի առանձին ներկայացուցիչներին կանգնել ժարքսիստական տեսակէտի վրայ ու օգնել աշխատաւորներին:

«Այն բոլորին, երբ դասակարգային պայքարը հասնում է իր վախճանին, կազմալուծման պրոցեսը օրապետող դասակարգի ու ամբողջ հին հաւարակութեան միջև բնութենում է այնքան սուր ու շոշափելի բնոյթ, որ տիրապետող դասակարգի մի մասը սկսում է դաւանանել նրան ու միանալ այն դասակարգի հետ, որին պատկանում է ապագան: Այդ պատճառով, ինչպէս նախկին ժամանակները արհեստիւրաւորայի մի մասը անցնում էր բուրժուազիայի կողմը, այնպէս հիմա բուրժուազիայի մի մասը անցնում է պրոլետարիատի կողմը, յատկապէս բուրժուական իդէոլոգիաների այն մասը, որը շնորհիւ իր աշխատանքի հասաւ պատմական ամբողջ շարժումի տեսական հասկացողութեանը»:

Սակայն, բուրժուական մատան, հպատակելով կապիտալիստական կամեջողութեանը, որը, ինչպէս լայնի է, մարդկային բանականութիւնից աւելի ուժեղ է, նախկին յամառութեամբ ու անշարժութեամբ յետ է քաշւում սոցիալիստական զաղափարների կռուցւածքից:

Սոցիալ-քաղաքական մտքի վեհ բարձրութիւնից Մարքսը ամենապարզ կերպով տեսաւ այդ

պրոցեսոր ու գիտական մարդաբանութեան փաստագրութեամբ հաստատուեց նրա պրոցեսորը «Կապիտալիզմ» մէջ: Հէնց դրանով նա, յանձին իրեն, արդարացրեց այն ասացւածը, որ մտածողի առաջ, որը կանգնած է սկզբունքի բարձրութեան վրայ, բացւում է ամբողջ ապագան, ինչպէս խոստացած երկիրը Ներսիսի բարձունքներից բացւեց Մովսէսի առաջ»:

Մարդկութեանը, որ բարբարոսութեան դարեշրջանում ծիացւած էր ոչ այնքան մեծ կոմմունիստների մէջ, որոնք շնորհիւ չղարդացած արտադրութեան, շատ աղքատ էին, վիճակւած էր ցրվիլիզացիայի բազմադարեան ընթացքում ապրել մասնաւոր սեփականութեան ու դասակարգային կռիւի ծանր պատմութիւնը, որպէսզի վերջնական հետեանքում սահմանի միջազգային, հանրամարդկային, խիստ հարուստ սոցիալիստական հասարակութիւն ու դրանով լաւերժացնէ նոր կոլտուրական դարեշրջանի սկիզբը:

Նման իւրաքանչիւր ուրիշ «էպոխայ անուր» գիտական տեսութեան, պատմական մատերիալիզմի վարդապետութիւնը ինքն ըստ ինքեան լայնքան հասարակ ու հասկանալի է, որ մինչև անգամ դժւար է բացատրել, թէ ինչո՞ւ է նա այնքան ուշ գտնւած: Մինչև անգամ պարզամիտ մարդու համար դիւրին է ըմբռնել, որ մարդու համար ամեն-

նախառջին ու զլխաւոր պահանջը կեանքն է, գոյութիւնը, և որ այդ պատճառով գոյութեան նիւթական միջոցների արտադրութիւնը պէտք է աւելի զբաղի ու հետաքրքրի մարդուն: Ենչ վերաբերում է իւրաքանչիւր մարդուն առանձին վերջրած, այն կարելի է հաստատել ամբողջ մարդկութեան համար ընդհանրապէս, մարդկային ցեղի համար անցեալում և ներկայում:

Սպիտոզան ասում է. «Մարդիկ սխալւում են, երեւելայելով, որ նոքա ազատ են: Այդ կարծիքը լինում է այն բանի վրայ, որ նոքա զիտակցում են իրենց գործողութիւնները, բայց չեն հասկանում պատճառները, որոնցով նոքա որոշւում են: Որովհետեւ, երբ նոքա ասում են, թէ մարդկային գործողութիւնները որոշւում են կամեցողութեամբ, այդ միայն խօսքեր են, որոնց մասին նոքա պարզ հաշիւ չեն տալիս իրենց»:

Իսկապէս, պատմութեան իրդէալիստական հասկացողութիւնը արմատանում է նոյա այն արամաբանական մտախարութեան մէջ, որով բացատրւում է հոգեբանական ուսման սխալը՝ աղատութեան և կամեցողութեան մասին: Թէ այս և թէ այն զէպքում, մակերեսային բանականութիւնը, մտապատկերները կամ գաղափարները, որոնցով ուղեկցում են գործողութիւնների իսկական պատճառները (կրքերը) մտքի մէջ, ընդունում է ցանկութեան

խսկալան պատճառով տեղ. նա խառնում է աղ պատճառների իդէալիզմն արտացոլումը նոյն պատճառների հետ:

Դեռերմինիզմի հետ, այսինքն, այն վարդապետութեան, որ ասում է, թէ կամքը ուրիշ երևոյթների նման աշխարհի մէջ հնազանդւում է պատճառականութեան օրէնքին (ու ալք տեսակ վարդապետութեան հիման վրայ միայն կարող էր զարգանալ պատմական մատերիալիզմը, այլապէս և չի կարելի լինել պատմական օրինականութեան մասին),—պատմական մատերիալիզմը մտնեցնում է այն հանդամանքը, որ նա ներկայացւում է մի խրաւիլակ այն բոլորի համար, որոնք պարծենում են այն իլլուզիայով, որպէս թէ բնութիւնը գէպի մարդս ունեցած մի ինչ որ հակման պատճառով օժտել է նրան սպէցիֆիկ ընդունակութիւնով կամ ոյժով, որը հնարաւոր է դարձնում նրան ազատաւորել բնութեան կատարեալ իշխանութիւնից իր բարոյական կամքը: Բայց քանի զեռ պ. պ. իդէալիստներին չի յաջողւի գտնել ու ցոյց տալ ծի մարդու, որը կարողանար ապշել առանց կերակուրի ու առանց ջրի ու ապրէր միայն Քրաքոյական կամքի ոյժով, մինչև այդ ժամանակ նաև օպպոզիցիան, որը ուղղւած է պատմական մատերիալիզմի գէմ, կլինի նոյն տեսակ զատարի երեխայութիւն, ինչպիսին ներկայանում է այն մարդ-

կանց օպպոզիցիան, որոնք զերազատւում էին Աստաճաշունչը Դարւինիզմի ուսմունքից, կամ աշխարհի Պաղոմեոն փոտեմի նախկին պաշտպանողների օպպոզիցիան՝ Կոպերնիկի վարդապետութեան վերաբերեալ:

«Անկարելի է, որ մարդս բնութեան փոքրիկ մասը շներկայացնի ու պարտաւոր չլինի հնազանդւելու նրա ընդհանուր կանոնին»,—զեռ այդպէս էր ասում Սպինոզան, որի սիստեմի մէջ ընդհանրապէս կարելի է գտնել ոչ սակաւ փիլիսոփայական զաղափարներ, որոնք կազմեցին Մարքսի սոցիալական տեսութեան հիմքը:

Պատմական մատերիալիզմը, ինչպէս շատերը սխալ են հասկանում, առաջ չի բերում ինտելեկտի ոչնչացում կամ զեզրադացիւ Զէ որ արտագրութեան բոլոր յաջողութիւնները մարդկային ինտելեկտի արդիւնքներն են: Ուրեմն, վերջին ինստանցիայում կուլտուրան ստեղծում է մարդկային խելքը, բայց ալք խելքը առաջ է մղում արտագրութիւնը, և արտագրութեան միջոցով նաև բոլոր մնացածը: Շատերի համար պատմական մատերիալիզմը համակրելի չէ նրա համար, որ նա իբր թէ Ժխում է իդէալական մոտիւններն ու ձգտումները: Բայց ալք տեսակ առարկութիւնը նոյնպէս անարդար է: Ալք վարդապետութիւնը սոփօրեցնում է, որ նիւթական շահերը էականա-

պէս կարեւոր դեր են կատարում մարդու կեանքի մէջ, որ մարդը ամենից առաջ մտածում է իր գոյութիւնը պահպանելու անհրաժեշտութեան և գոյութեան միջոցների մասին և այդ պատճառով մարդկանց մեծամասնութիւնը, որոնք կանգնած են մի ալտերնատիվի առաջ—հրաժարել էականապէս զլիսաւոր նիւթական շահերից, կամ իղէալական ձգտումներից—աւելի շուտ զոհում են վերջինս, քան առաջինը։ Պարզ է. մարդս կարող է իր գոյութիւնը պահպանել լրագիր չկարդալով, չհանախելով կէկեղեցի կամ թատրոն, թաղանով չլացւելով, կարող է ապրել առանց քրիստոնէական սիրոյ ու մարդասիրութեան, առանց կրօնի ու բարոյականութեան, բայց նա չի կարող ապրել առանց կերակուրի, առանց հազուստի ու բնակարանի։ Այդ բաների ու կարիքների հետ համեմատելով, բոլոր իղէալական բաներն ու կարիքները—հոխութիւն են։ Այնուամենայնիւ մատերիալիստական տեսութիւնը չի աւելացնում նիւթական բարիքների նշանակութիւնը ի վնաս իղէալական բարիքների նշանակութեան։ Չէ որ նա չի պնդում, թէ այդպէս պէտք է լինի. նա միայն հաստատում է, որ այդպէս եղել է, կամ լինում է։ Անկասկած պաշտօնի գմբէթն ու ֆասադը հիմքից զեզեցիկ են, բայց հիմքը կարող է մնալ առանց գմբէթի, բայց գմբէթը առանց հիմքի անկարելի է։ Այդ օրինակից կարելի է, ի միջի

ալլոց, տեսնել և տն, որ բոլոր իղէոլոգ բեֆոր մատորները, որոնք երազում են սոցիալական խնդիրը լուծել մօթալի, կրթութեան օգնութեամբ և այլն, գործը սկսում են ոչ այն ծայրից ու նմանում են այն խելառ հարտարապետին, որը մտածում կառուցել գմբէթը հիմքը կառուցանելուց առաջ։

Ճիշտ է, բայցի ապրելու ցանկութիւնից մարդս ունի նաև շատ ուրիշ ցանկութիւններ. հետաքրքրութիւն, ձգտումն զէպի արդարութիւնը, սերը զէպի բնութիւնը, զէպի գեղարուեստը, հոկումն այս կամ այն դործունէութեան, խաղալու կիրք, անկեղծութիւն և այլն, և անձնական բնաւորութեան ու հանգամանքների կախումից, այս կամ այն հակումը զգալ է տալիս իրեն նրա մէջ շատ թէ քիչ զօրեղ ու հոստատ կերպով։ Բայց աքսիոմաներից մէկը՝ աֆֆեկտների ուսման մասին ասում է, որ զօրեղ չուզմունքը լաղթում է թուլին, բայց հոգեբանութեան աքսիոմաներից մէկը ասում է, աֆֆեկտների մէջ ինքնապաշտպանութեան բնազդը ամենազօրեղն է։ Այդպիսով, թէև իղէալական ձգտումների առաջ բացւած է ազատ ապարէզ, սակայն այնտեղ, որտեղ նօքա հանգիստում են էականապէս զլիսաւոր նիւթական շահերի հետ, լաղթանակ տանողները միշտ էլ լինում են վերջիններս։

Զաւթագանց յիծաղելի է այն, որ պատմական մատերիալիզմի այդ տեսակը քննադատութիւնով պարապում են այն գոտակարգի ներկայացուցիչները, որոնց մէջ փարթամօրէն ծաղկել է շահի և կարերայի ձգտումը ու համարեա մեռել ձգտումը դէպի գաղափարական բարիքները: Զգուշի «պրակտիկ» մատերիալիզմը շօշափելի կերպով հակառու է այն բարձրաթուիչ իդէալիստական Փրագմներին, որոնց նա շուալ կերպով գործածում է պարզամիտ մարդկանց մասսային հրապուրելու համար: Ծիծաղելի է և այն, որ վերոյիշեալ յանդիմանութիւնը արու է այն կուսակցութեանը ու գոտակարգին, որոնց քաղաքական ձգտումները, թէև բացաղրուում են նիւթական շարժառիթներով ու արմատանում են մատերիալիզմի մէջ, բայց իրենց վերջնական նպատակներով բարձրանում են մինչև իդէալիզմը, և որոնք չեն սիրարանում իդէալիզմի հետ, տիրապետող դասակարգերի այդ խորթ որդու հետ, այլ անկեղծ ու սիրով մշտկում են նրան:

Շատերին շփոթեցնում է «մատերիալիզմ» խօսքը որը մանաւանդ վիրաւորում է գերմանացիներին, որոնք միշտ ձգտում էին մտածողների ու գիտնականների տիտղոսը իրենց աղբին վերապահել: Բայց այդ գերմանացիները մոռանում են, թէ ինչ էր ասել նրանց՝ իրենց սեփական ազգային Փառուսար. «Նա չեմ կարող այդքան

բարձր գնահատել խօսքերը»: Ափսոս, որ նոցա մինչև անգամ խոշոր գիտնականները չեն հասկանում, որ պատմական ու բարոյական մատերիալիզմի միջև դոյութիւն ունի անազին անդունդ, որ այս ու այն մատերիալիզմի միջև այնքան քիչ է նմանութիւնը, որքան Սալամանցրի, որ ցոյց են տալիս ազլարիումներում և այն «Սալամանցրի» միջև, որ տրորում են ուսանող-կորպորանաները իրենց քէթերի ժամանակ: Այնուհետև պատմական մատերիալիզմը ոչ մի նմանութիւն չունի փիլիսոփայական մատերիալիզմի հետ, թէև սոցիալիզմի մի քանի տեորետիկները մինչև անգամ փորձեցին յարակցութիւն հաստատել այս ու այն մատերիալիզմի ձևերի հետ: Պատմական մատերիալիզմը հաստատում է մարդկութեան զարգացման օրէնքները, զլիաւորապէս, նիւթական կողմից: Նա դործ չունի ոչ տիեզերքի հետ, ոչ էութեան պրոբլեմի սկզբնաւորութեան ու վախճանի հետ, ոչ Փենսմենների ոգու պրոբլեմի հետ (զգայողութիւնների, զգացմունքների, մտքերի, ցանկութիւնների). պատմական մատերիալիզմի համար միեւնոյն է, ինչպէս են վճռում ու հասկացում այդ բոլոր պրոբլեմները մատերիալիստական, մոնիստական, գերփորձական թէ ուրիշ տեսակէտից, ինչպէս միեւնոյն է նրա համար և այն, թէ ինչ տեսակ ուղղութիւններ դոյութիւն ունին բժշկական գիտութեան մէջ:

միշտ է, զիտական սոցիալիզմը մի ամբողջ աշխարհաշինացք է, բայց ոչ բնականուր, ունիվերսալ աշխարհաշինացք, այլ միայն սոցիալ-փրկսոփաշինական կամ սոցիալ-պատմական:



2013

0024115



248

Գինն է՝ 10 բուր.
